

ԵՐԿՐՄ.ԳՈՐԾԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

ԵՐԻՎԱՇԽՋԱՆ-ՆԵՐԻ. — Երկրագործութիւնը զբաղւում է բոյսերի և կենդանիների արտադրութեամբ:

Հողը նպաստաւոր պայմաններով շահագործելու համար պէտք է փորձառու և հմեւտ լինել երկրագործութեան արհեստին. տղիտ երկրագործը նոյն խսկ պարագու հողից չկարող ստանալ այն արդիւնքը, որ պիտի ստանար մի հմուտ երկրագործ:

Հողի արդիւնաբերութիւնը կախուած չէ միայն երկրագործի կամքից, այլ նաև շրջապատող օգերեւութարանական հանգամանքներից. մարդս անկարող լինելով իշխել բնական տարրերի վերայ, ակամայ հնագանդում է նոցա օրէնքներին: Մշակութիւնը յաջող պայմանների մէջ գնելու համար անհրաժեշտ է ծանօթ լինել ոչ միայն լոյսի, խոնաւութեան, ջերմութեան, բարեխառնութեան, կլիմայի և այլ բնական հանգամանքների հետ, այլ և ապրած միջավայրի երկրաբանական դրութեան և ժողովրդի տնտեսագիտական պահանջների հետ: Ոէտք է լաւ ճանաչել և իմանալ հողերի յատկութիւնները, բոյսերի պահանջներն ու մշակութիւններն, մեքենաների և գործիքների՝ ինչպէս նաև երկրագործական բոլոր գործողութիւնների կիրառութիւնները, վերջապէս հողի արտադրութիւնը օգտակար դարձնելու խնայողական միջոցները:

Հողի արտադրութեան մի մասը մարդկանց համար անմիջապէս գործածելի է, իսկ մի մասն էլ կենդանիների միջոցով փոխում է կենդանական ոյժի, մսի, կաթի, բուրդի և այլ բաների: Այդ կենդանիները կոչւում են աժարակի վենդանիներ, ինչպէս ձին, եղր, գոմեշը, ոչխարը և այլն: Առանց այս կենդանիների անկարելի է մշակութիւնը. նոքա են որ աշխատում են, նոքա են որ բոյսերի անգործածելի մասերը գործածելի նիւթերի են վերածում, դարձեալ նոքա են որ հողի արտադրած նիւթերի մի մասը աղբի ձեռով կը կին նորան են վերադարձնում:

Երկրագործութիւնը մի լոկ արհեստ չէ և ոչ մի լոկ գիտութիւն, ինչպէս շատերը կարծում են, այլ մի ճարտարարուեստ որ իր մէջ պարունակում է թէ գիտութիւն և թէ արհեստ: Գիտութիւնը զանազան միջոցներ է ստեղծում երկրագործութիւնը կատարելագործելու, իսկ արհեստը գիտութեան ստեղծած միջոցները ի դործ է դնում: Աւրեմն երկրագործութիւնը մի ճարտարարուեստ է, որ ամեն ջանք դործ է դնում որ և է երկրի կամ դաւառի բնական դրութեան և տնտեսական պահանջների համաձայն խնայողական միջոցներով հողից մեծագոյն արդիւնք ստանալ:

Արդարեւ, երկրագործութիւնը մի ճարտարարուեստ է, որովհետեւ բոլոր երկրագործների նպատակն է սերմի, օդի, ջրի, հողի և աղբի մէջ գտնուած նախնական նիւթերը կերպարանափոխել բոյսերի և կենդանիների, ինչպէս արուեստագէտները կտաւի և զանազան հիւսուածքների են փոխում վուշը, կանեփը, բամբակը և ուրիշ նախնական նիւթեր. վերջինիս աշխատանոցը գործարանն է, իսկ առաջինինը՝ հողը և աղարակը. բնական է, որ երկուսն ել միենոյն պայմանների տակ չեն գտնուում. արուեստագէտի արտադրութիւնը սահմանուած է միայն մի տեսակի համար, մինչդեռ երկրագործնը շատ տեսակի. առաջինը որոշել է իր գործի պայմանները, նախապէս իմանում է թէ որչափ շահ կը բերէ արտադրած առարկան. իսկ երկրորդը առանց օժերեկութարանական հանգամանքների աջակցութեան չէ կարող գործել և ոչ իր ուղածի պէս վճռել իւր գործի պայմանները. միշտ ի նկատի պիտի ունենայ կարկուտը, քամին, երաշտութիւնը, վնասակար միջատներն եայլն. հակառակ դէսլքում մի օրուայ, նոյն իսկ մի ժամուայ մէջ կարող է պատահիլ որ իւր հունձը ոչնչանայ: Երկրագործը նաև պարաւորուած կէտ առ կէտ պէտք է հետեւ խնայողական պայմաններին և ըստ այնու որոշէ մշակութեան դրութիւնը. ապա թէ ոչ կարող է մեծամեծ վնասների ենթարկուիլ. օրինակի համար սրանից մի քանի տարիներ առաջ տորոնի մշակութեամբ երկրագործները մեծ փող էին շահում, ընդարձակ դաշտեր էին յատկացուել այդ բոյսի մշակութեան. վեր-

ջերս Եւրոպայում գտան տորոնին փոխարինող մի քիմիական բազադրութիւն, որ աւելի լաւ է և աժան է ծախւում։ ուստի տորոնը կորցրեց իր արժեքը, իսկ երկրագործները տուժեցին ստիպուած լինելով փոխել իրենց մշակութեան դրութիւնը, որ խիստ դժուարին է, և մեծամեծ ծախսեր է սպահանջում։

Մեր բոլոր ասածներից հետեւում է, որ երկրագործը պէտք է լինի խոհեմ, փորձառու և հմուտ իւր արհեստին։ առանց գործնականի գիտութիւնը այնքան արժեք չունի, իսկ առանց գիտութեան գործնականն էլ բաւական չէ։ արդէա երկրագործն անկարող է գործադրել գիտութեան սկզբունքների վերայ [հիմնուած աշխատութեան մի լաւազ ոյն եղանակ։

Երկրագործութեան օժանդակ գիտութիւններն են. երկրաբանութիւն, [հանքաբանութիւն, բուսաբանութիւն, կենդանաբանութիւն, քիմիա, բնագիտութիւն և մեքենագիտութիւն. այս գիտութեանց միջոցով պիտի ուսումնասիրենք երկրագործութիւնը, որ բազմաթիւ ճիւղերի է բաժաննում։ որոնցից հողագործութեանը պիտի լինի մեր ուսումնասիրութեան առարկան՝ հետեւեալ կարգով. Ա. Հողագործութեան. Բ. Օդեղեան-նախանութեան. Գ. Բոյսերի անդամութեանը և իւսունք. Դ. Հողի մշակումը առաջնորդութեան. Ե. Հողերի բարեփոխութեանը (մարգախառնումն և կրախառնումն). Զ. Պարբառացութեան (կենդանական, բուսական և քիմիական ազրեր). Է. Երկրագործական թերեւաներ և գործերներ (շնչաւոր և անշունչ). Ը. Երկրագործական գործողութեաններ. Թ. Մշտիւթեան. Ժ. Բէրեի պահանջութեան։

Մելքոն Ապօրասնակ

